**Արձանագրություն N 2**
**«ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3» ծածկագրով «գրասենյակային նյութերի» ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգի**
**«Հրավերի պարզաբանման մասին»**

**ք. Էջմիածին** **«15» հունվարի 2021 թ.**

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ՝**
Էջմիածնի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար /գնահատող՝ ԳԱՊ/ Գ. Հարությունյան

**Հանձնաժողովի անդամներ՝**
Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի
գլխավոր մասնագետ – գլխավոր հաշվապահ /գնահատող՝ ԳԱ/ Ա. Օհանյան

Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի
առաջատար մասնագետ /գնահատող՝ ԳԱ/ Շ. Տեր – Խաչատրյան

Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի
1-ին կարգի մասնագետ /բացող՝ ԲԱ/ Մ. Սարգսյան

Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի
1-ին կարգի մասնագետի ժ/պ /բացող՝ ԲԱ/ Խ. Զազյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի պետի ժ/պ /ՄՀՄ/ Լ. Քալաշյան

1. Հրավերի վերաբերյալ պարզաբանում տալու մասին

**1.1 «ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 15.01.2021 թ. ստացվել է հետևյալ հարցադրումը.

**Հարցադրում N 1**

Խնդրում եմ տալ պարզաբանում «ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3» ծածկագրով գնանշման հայտի վերաբերյալ առաջացած ներքոնշյալ հարցի վերաբերյալ՝

Նշել եք, որ Ձեզ հարկավոր է A4 ձևաչափի թուղթ հետևյալ պարամետրերով՝

Թուղթ A4 ֆորմատի: Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու, գրասենյակային աշխատանքների համար: Չափերը՝ 210*297 մմ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80 գ/մ2: Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, փաթեթի քաշը՝ 2,5 կգ: Double A կամ համարժեք:

Դուք նշել եք, որ ձեզ հարկավոր է A4 ձևաչափի A դասի թուղթ՝ սպիտակությունը ոչ պակաս, քան 90 %: Թղթի սպիտակությունը գնահատվում է հիմնականում CIE համակարգով: Օրինակ A դասի թուղթը ունի 163 CIE-ից բարձր (մինչև 175CIE սպիտակություն): Հետևաբար խնդրում եմ պարզաբանել «սպիտակությունը ոչ պակաս, քան 90 %» պարամետրը՝ CIE գնահատման համակարգով, ո՞ր արժեքին է համապատասխանում և նշեք Double A թղթի պարամետրերը:

**1.2 «ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 15.01.2021 թ. ստացված հարցադրմանը պատասխանել հետևյալ բովանդակությամբ.

**Պարզաբանում N 1**

Հարգելի մասնակից:

Ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում եմ, որ **«ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում՝ մասնավորապես A4 ֆորմատի թղթի տեխնիկական բնութագրում չկա պահանջ Ձեր կողմից նշված CIE համակարգի վերաբերյալ, ուստի վերջինիս մասով պահանջ լինել չի կարող: Նշեմ նաև, որ հանձնաժողովը չի կարող պարզաբանել թե արդյոք «սպիտակությունը ոչ պակաս, քան 90 %» չափորոշիչը CIE համակարգի որ արժեքին է համապատասխանում:

Ձեր կողմից հայտը նախապատրաստելիս խնդրում եմ առաջնորդվել հրավերի տեխնիկական բնութագրում նշված չափորոշիչներով, այն չափորոշիչները, որոնք հրավերում չկան, կարող են առաջարկվել Ձեր կողմից:

Double A թղթի տեխնիկական բնութագրերն են. Թուղթ A4 ֆորմատի, սպառողական ձևաչափերի, ոչ ավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու, գրասենյակային աշխատանքների համար: Չափերը՝ 210*297 մմ, ստությունը 80 գ/մ², փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով, յուրաքանչյուրում 500 թերթ:

**Ընդունվում է որոշում՝ 5 կողմ, 0 դեմ:**

***Հանձնաժողովի նախագահ՝***
Էջմիածնի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար /գնահատող՝ ԳԱՊ/ — Գ. Հարությունյան

***Հանձնաժողովի անդամներ՝***
Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի
գլխավոր մասնագետ – գլխավոր հաշվապահ /գնահատող՝ ԳԱ/ — Ա. Օհանյան

Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի
առաջատար մասնագետ /գնահատող՝ ԳԱ/ — Շ. Տեր – Խաչատրյան

Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի
1-ին կարգի մասնագետ /բացող՝ ԲԱ/ — Մ. Սարգսյան

Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի
1-ին կարգի մասնագետի ժ/պ /բացող՝ ԲԱ/ — Խ. Ջազյան

***Հանձնաժողովի քարտուղար՝***
Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի պետի ժ/պ /ՄՀՄ/ — Լ. Քալաշյան